



113. ԱՌՍԸԶ ԿԱՏՈՒՆ

Յառեջ ժամանակ Ստամբուլա քաղաք մարդ ու կնիկ կէզնին, ուրանց կատու մե կէզնի: Կատու մը՛սի, ասու քերեսեն յընկուկ, մինակ ուր տան տերերուն շէր, վիր հասներ՝ կը ճանկոներ, կը թռներ վրը սեղնին, աման-չաման կը ջարդեր, համով բաներ կը դողներ, մուկ՝ դաթի հե՛շ, մեկ խոսքով՝ կատու շէ, առուծ մե: Մարդ ու կնիկ ի՛նչ էնին-չէնին, օր աղատվին կատվուց, դեման դողրա յոտքերու տակ կտոր մե տախտակ կը կապին, տանին թալին ի ծով:

Առսրդ կատվու բա՛խտն իշկե. վրը տախտրկին դես կէրթա, դեն կէրթա, տաղլեք կը քշին տանին սուլթանի քոշկ ու սարի մոտ: Սուլթանն էդ օր կանուկ կէզնի փանջարի յառեջ, կը տեսնա հանդե ծովի տաղլու վրեն բան մե դիկա դրիս ուր քոշկ ու սարեն: Ի՛նչ էզնի, ի՛նչ շէզնի՝ սուլթան դուշընմիշ կէնե, օր ընդրա տակ բան մե կա, կը կանչե ուր խղմաթքարներուն, կըսե.

— Մովու վրեն բան կը տեսնա՞ք:

— Օր դու կը տեսնաս՝ մենք լե կը տեսնանք:

— Գա՛ցեք բերեք:

Սուլթանի խղմաթքարներ վռադ-վռադ կը վաղին. կը տեսնան հանդե սե, գարշելի կատու մե, քոտքերուն տախտակ կապուկ, փաշի պես գիկա քոշկ ու սարի դեն, օր կը հասնի ափ՝ կը մոտենան, կը բռնին, կը բերին սուլթանին:

Սուլթան կը տեսնա՝ իդա կատուն ըսկի մարդոց բանի տեղ չը դնե, իմալ թագավորական մեծավոր՝ կէրթա ըռհաթ կը նստի ուր

թախտի վրեն, զբերան կը բանա, կը խպե, դբեղեր կը սրբե, խոլոր կիշկե յըմնուն, յանի թե՛ դուք ի՞նչ իք իմ չառեջ, ես Առսըզ կատուն իմ:

Սուլթան կըսե.

— Իդա կատուն՝ ուր յոտքերուն տախտակ է կապի, օր չը խեղ-դրվի, ըսել է էդի գլխով կատու է, հրամանք կէնիմ՝ ֆարման մե կախեք ուր վիզ, թր՛դ էրթա ասլրի:

— Սուլթանն ասրած կենա, ի՞նչ ֆարման, կը հարցու վաղիր: Սուլթան կըսե.

— Ֆարման՝ «Մարդ թրդ սիրտ շէնե կպի իգա կասվու մաղին»: Ֆարման կը գրին, սուլթան զուր անուն, զուր մհոր կը դարկե վրեն, խայթանի թելով մե կը կախին կատվու վղեն, տոռք-փառոք կը դնին ճամպու, ճամպին ո՛ն օր կը հանպրտի՝ դուխ կիտա, դեն կը քաշվի, օր կատուն յընցնա: Կատուն օր գընցնա չառեջ՝ մեկ մե կըսե բարձր ձենով.

— Սուլթանի կատուն է, հա՛, ֆարման կա ի վիզ, կատու չէ՛, ասլան-խասլան է:

Մեկ խոպող հալվոր մը լե կըսե.

— Կատու չէ՛, վաղիր-նազիր:

Մեկ ուրիշ լե կըսե.

— Վո՛ւա, մեր սուլթանն ախմախ է: Կատու ու ֆարման:

Առսըզ կատուն կըլսե, չը լսե, չընք դի՛նա, մինակ չառեջ կէրթա, ըսկի մարդոց շիշկե, բանի տեղ չըդնե, դուզե շուտ տուն հասնի, էլման շարութեն էնե, չըմքի էնոր բնութք էդմալ է, ցեղական է՝ դըռ Ադամու վախտից:

Առսըզ կատուն չառեջ ի՛նչ էր, օր մկա ի՛նչ էղնե: Ֆարմանի ի վիզ՝ խուռնագ-խուռնաղ չառեջ կէրթա կը հասնի ուր տիրոջ տուն: Մարդ ու կնիկ օր կը տեսնան՝ շոքեր ուրանց կը թուլնա, կիշկին յիրարու, է՛, կոնա՞ն ձեն հանին, քա՞նի գլուխ ունին ուրանց փիջանուն: Կը նստին, դիլան, զուրանց օր ու արև կանիծին:

— Կնի՛կ, — կըսե մարդ, — իդա չընկնավոր կատուն շուրի մկա առանց ֆարմանի զմեր տուն ավիրեց, մկա, օր ֆարման կա ուրին, չընք կոնա քսվի ուր մազին, զմըզի կը դարձու փարիշան, քե՛լի զմեր տուն-տեղ բառնանք, փախնինք, թե չէ՛ ըդի զմեր գլուխ կուտե:

— Սուլթանի պատանք կարիմ տաս տակ թելով, ըդի ի՛մալ զուր խելք տվիր է կատվուն:

— Չը՛շ, — կըսե մարդ, — ֆարմանլի կատուն կոնա խաբար իգա սուլթանին:

էլ չարա չկա. մարդ ու կնիկ զուրանց սուն կը բառնան, կը
փախնին. հմա կրսին՝ կասովույ շրն կոնա աղատովի. յուր կէրթեն՝
կէրթեր կը դաներ, յառեջլընուց յեվելի կաաղուկ կը ճանկոեր, կը
թռներ վրը սեղնին, աման-չաման կը ջարդեր, համով բաներ կը
զողներ, շրմթի անխելք սուլթանից ֆարման կեր ուրին, ո՞ր կոներ
ճուտուն հաներ Առարդ կասովու յառեջ:

